ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԳՐԱՍԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՀԱՏԿԱՑՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ 01

23.01 2020թ.

ք. Երևան

Հայաստանի հանրապետության Պաշտպանության նախարարությունը, ի դեմս նախարար Դավիթ Տոնոյանի (այսուհետ՝ պետական մարմին), որը գործում է պետական մարմնի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Հումանիտար ականազերծման և փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ը, ի դեմս տնօրեն Ռուբեն Առաքելյանի (այսուհետ՝ կազմակերպություն), որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ կողմեր), հիմք ընդունելով «2020թ. պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքը, իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1.Սույն պայմանագրով , Պատվիրատուն՝ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով վերապահված լիազորությունները պատշաճ կատարելու նպատակով, Կատարողին տրամադրում է 338945.5 հազար դրամ՝ « 2020թ. պետական բյուջեի մասին » ՀՀ օրենքի բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման 02 բաժին 05 խմբի 01 դասի 03 ծրագրի գծով հաստատված հատկացումներից : Կատարողը պարտավորվում է իրականացնել ՀՀ կառավարության 26.12.2019թ-ի N 1919-Ն որոշման N5 հավելվածի N7 աղյուսակում նշված (ըստ դասիչների) 1177 ծրագրի «Հումանիտար ականազերծման և փորձագիտական ծառայությունների կազմակերպում» 11001 «Հակաականային գործողությունների ենթակա տարածքի հետազննում, քարտեզագրում, նախատեսվող ծավալի աշխատանքների հստակեցում և իրականացվող միջոցառումների պլանավորում» միջոցառումները և հատկացումները օգտագործել «Հումանիտար ականազերծման և փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի 2020թ հաստատված ծախսերի նախահաշվին համապատասխան:

2. Կողմերի իրավունքներն ու պարտավորությունները

2.1.Պետական մարմինն իրավունք ունի՝

2.1.1.ցանկացած ժամանակ (այդ թվում՝ լիազոր մարմնի միջոցով) ստուգելու կազմակերպության կողմից իրականացվող միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

2.1.2.միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

ա.կազմակերպությունը ժամանակին չի սկսում ծրագրի իրականացումը, կամ ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

բ.կազմակերպությունն երկու և ավելի անգամ խախտել է ծրագրով նախատեսված առանձին միջոցառումների իրականացման ժամկետները (միջոցառումների իրականացման ժամկետներ նախատեսված լինելու դեպքում),

գ.իրականացված միջոցառումները չեն համապատասխանում ծրագրով սահմանված պահանջներին.

2.1.3.սույն պայմանագիրն օրենքով կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ միջոցառումների արդյունքները:

2.2.Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1.պահանջելու վճարել իրեն հասանելիք գումարը.

2.2.2.պետական մարմնի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները:

2.3.Պետական մարմինը պարտավոր է՝

2.3.1.ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել կազմակերպությանը.

2.3.2.կատարել ծրագրի (առանձին միջոցառումների) իրականացման մոնիթորինգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ.

2.3.3.իրականացնել ծրագրով նախատեսված այլ աշխատանքներ.

2.4.Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1.իրականացնել ծրագրի շրջանակներում պետական մարմնի կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի հանրապետության հաշվապահական հաշվառման N 20 ստանդարտի դրույթներին համապատասխան հաշվառում.

2.4.2.պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել ծրագրով և (կամ) սույն պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով.

2.4.3.կատարել պետական մարմնի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները.

2.4.4.սույն պայմանագրի գործողության ընթացքում ապահովել ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու ու պետական մարմնի հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում.

2.4.5.պետական մարմնի կողմից առանձին միջոցառումների իրականացման մասին հաշվետվությունները չընդունվելու դեպքում կազմակերպությունը պարտավորվում է անվճար՝ պետական մարմնի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները:

2.4.6 նախատեսված միջոցառումների տարեկան արդյունքները պետական մարմնի կողմից ընդունելուց հետո արդյունքում առաջացած տնտեսումները (խնայողությունները)վերադարձնում է ՀՀ պետական բյուջե՝ ոչ ուշ, քան 2020թ դեկտեմբերի 25-ը:

3. Մոնիթորինգը

3.1.Պետական մարմինը ծրագրի իրականացման նախնական, ընթացիկ և վերջնական արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:

3.2.Մոնիթորինգն իրականացվում է պետական մարմնի և (կամ) նրա կողմց լիազորված անձի կողմից:

3.3.Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով կազմակերպությանը տրվում են ցուցումներ, և կատարվում են առաջարկություններ:

3.4.Պետական մարմինը ցանկացած ժամանակ կարող է ծրագրի շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով ծրագրին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:

3.5.Մոնիթորինգի իրականացման ընթացքում կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

4. Վճարման կարգը և ժամկետները

4.1.Կազմակերպության վճարումները կատարվում են միջոցառումների իրականացման հայտն ընդունելու օրվան հաջորդող 10 աշխատանքային օրվա ընթացքում, եթե ծրագրով սահմանված չեն վճարումների կատարման այլ կարգ և (կամ) ժամկետներ:

5. Կողմերի պատասխանատվությունը

5.1.Սույն պայմանագրով և ծրագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում կազմակերպությունը պարտավորվում է պետական մարմնին փոխհատուցել չիրականացված միջոցառման չափով և վճարել տուգանք՝ չիրականացված միջոցառման համար նախատեսված գումարի 1 տոկոսի չափով: Ընդ որում, տուգանքի վճարումը կազմակերպությանը չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից: Պետական մարմինը սույնկետով նախատեսված գումարները հաշվարկում և հաշվանցում է կազմակերպությանը վճարվելիք գումարներից:

6. Պայմանագրի գործողության ժամկետը

6.1.Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի ստանձնած պարտավորությունների՝ ամբողջ ծավալով կատարումը:

7. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ_ՄԱԺՈՐ)

7.1.Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և, որը կողմերը չէին կարող կանխատսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուսկողմին:

8. Եզրափակիչ դրույթներ

8.1.Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատված ծրագիրը հանդիսանում է սույն պայմանագրի ամբաժանելի մասը:

8.2.Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են կողմերի կողմից:

8.3.Պայմանագիրը կնքվում է պայմանագրի կողմերի թվին համապատասխան թվով օրինակով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

8.4.Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև սույն պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի հանրապետության օրենսդրությամբ:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմաններն և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ պաշտպանության նախարարություն	«Հումանիտար ականազերծման և փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ
ք. Երևան, Բագրևանդի 5	ք. Էջմիածին, Մ. Խորենացու 18
ՀՀ ՖՆ Գործառնական վարչություն	Երևանի թիվ 1 գանձապետ.բաժ
Հ/Հ 900011113223	Հ/Հ 900018002254
	ՀՎՀՀ 04724306

Դ. Տոնոյան

Ռ. Առաքելյան